ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության փորձագետ Մերի Վանունի

Ես՝ Մերի Վանունիս, 2025 թվականի փետրվարի 25-ի N 69-Ա պայմանագրի համաձայն որպես փորձագետ աշխատում եմ ՀՀ Ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչությունում:

2025 թվականի մարտի 5-ից մինչև 2023 թվականի հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Հիմք ընդունելով իմ կողմից կատարված միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

2. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում վերաբաշխումների եվ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումների իրականացման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման գործընթացին և ներկայացրել եմ առաջարկություններ՝ իրավական հարցերի վերաբերյալ:

3. Մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակներում մասնակցել եմ ՌԴ ՖՆ գործընկերներ հետ համատեղ՝ համայնքներ իրականացված այցերի շրջանակներում բնակչության իրազեկման գործընթացին, ինչպես նաև մասնակցել եմ Արենի համայնքի բարձր դասարանների աշակերտների հետ մասնակցային բյուջետավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վերաբերյալ քննարկումներին, վերջիններիս ներկայացրել եմ Ծրագրի առանձնահատկությունները, դրա կարևորությունը, բնակչության իրավասությունների շրջանակը Ծրագրի իմաստով, որը նաև լուսաբանվել է հանրային հեռուստատեսությամբ:

4.Մասնակցել եմ վարչության կողմից մշակվող այլ իրավական ակտերի վերաբերյալ քննարկումներին և ներկայացրել եմ առաջարկություններ՝ իրական հարցերի վերաբերյալ:

5. Աշխատանքների իրականացման ընթացքում, իմ լիազորությունների շրջանակներում, շփվել եմ բաժնի աշխատակիցների, նախարարության ներսում ստորաբաժանումների

ղեկավարների և աշխատողների հետ, իսկ նախարարությունից դուրս վարչության պետի հանձնարարությամբ շփվել և հանդես եմ եկել որպես ներկայացուցիչ:

6.Կատարել եմ վարչության պետի հանձնարարականները:

ՀՀ ֆինանսների նախարարության
բյուջետային գործընթացի համակարգման
վարչության փորձագետ

Մերի Վանունի 27.06.2025թ